ՀՀ ԿԳՆ <<Կրթական ծրագրերի կենտրոն >> ԾԻԳ ՊՀ <<Կրթության բարելավում>> ծրագրի շրջանակներում ՀՀ բուհերի դրամաշնորհային հայտերի գնահատման փորձագետների ընտրության մրցույթի վերջնաժամկետի երկարացում

Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկի Միջազգային զարգացման ընկերակցության համագործակցությամբ իրականացնում է «Կրթության բարելավում» վարկային ծրագիրը, որի շրջանակներում ընթացքի մեջ են Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) զարգացման աշխատանքները: ՆՄՀ միջոցով մրցակցային հիմունքներով դրամաշնորհներ են տրամադրվում ՀՀ բուհերում նորարարական ու զարգացման ծրագրերի իրականացման և կարողությունների հզորացման նպատակով: ՆՄՀ-ն աջակցում է բուհերի այն ծրագրերին, որոնք ուղղված են կրթության համապատասխանության, արդյունավետության և հասանելիության բարձրացմանը: Ներկայումս մեկնարկում է «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում ՆՄՀ իրականացման հավելյալ շրջափուլը:
Բուհերի կողմից ներկայացված դրամաշնորհային հայտերի գնահատման համար նախատեսվում է կազմել հայտերի գնահատման հանձնաժողով (ՀԳՀ): ՀԳՀ-ում բուհերի կողմից ներկայացված յուրաքանչյուր դրամաշնորհային հայտի գնահատման նպատակով ստեղծվելու են աշխատանքային խմբեր: Յուրաքանչյուր աշխատանքային խմբում ընդգրկվելու են 3-ական փորձագետ: Աշխատանքային խմբում ընդգրկվում են ներկայացված հայտի ուղղության/ոլորտային թեմատիկ փորձագետներ և ֆունկցիոնալ փորձագետներ: Փորձագետների աշխատանքների հիմնական շրջանակը հետևյալն է.
1. Իրականացնել հայտի գնահատումը համաձայն ՆՄՀ Ղեկավար ձեռնարկի Առդիր 1-ի (http://www.cfep.am/hy/announcements/item/2016/07/25/3746/) հետևյալ կարգով.
• Ներկայացրած Ծրագրի համապատասխանությունն ազգային առաջնահերթություններին և հաստատության ռազմավարական պլանին: ՀԳՀ փորձագետը պետք է գնահատի, թե ինչքանով է ներկայացված ծրագիրը (ա) համահունչ հաստատության նպատակներին, խնդիրներին և զարգացման ռազմավարական ուղղություններին՝ հիմնվելով հաստատության կողմից ներկայացված ռազմավարական ծրագրի վերաբերյալ, (բ) համահունչ ՆՄՀ Համակարգող խորհրդի (ՀԽ) կողմից տվյալ շրջափուլի համար սահմանված առաջնահերթություններին,
• Դրամաշնորհային ծրագրի նախատեսված աշխատակազմի որակավորումը և համապատասխանությունը նպատակին – ՀԳՀ

փորձագետը պետք է գնահատի, թե ինչքանով է հայտում հստակ ներկայացված ծրագրային աշխատակազմի իրավասությունների և պարտավորությունների շրջանակը և ինչքանով են ներկայացված թեկնածությունները համապատասխանում նվազագույն որակավորման պահանջներին՝ հաշվի առնելով ՆՄՀ ղեկավար ձեռնարկի բաժին 7.2.4 կետի պայմանները:

• Ծրագրի բովանդակությունը. ՀԳՀ փորձագետը պետք է գնահատի, թե արդյոք բուհը տրամադրել է ծրագրի ռազմավարական վերլուծությունն ու հիմնավորումը, ինչպես նաև ծրագրի մեթոդաբանությունը: Այս գործընթացում պետք է գնահատվեն նաև ծրագրի իրականացման պլանը, մոնիտորինգի և գնահատման պլանը, ինչպես նաև գնումների պլանը:

• Ակնկալվող ազդեցությունը/օգուտները: ՀԳՀ-ի փորձագետը պետք է ստուգի արդյոք բուհը (ա) տրամադրել է նախագծի նորարարական բնույթի համար անհրաժեշտ հիմնավորումներ, և ցուցադրել է դրանցից ակնկալվող որոշակի օգուտները, (բ) տրամադրել է նախագծի կայունության ապացույցներ, որոնք կապահովեն դրամաշնորհի շրջանակներում ծրագրի իրականացման ավարտից հետո երկարաժամկետ կայունություն և շարունակականություն, (գ) ներկայացրել է ծրագրի արդյունքների իրատեսական տարածման պլան:

• Ծախսերի արդյունավետությունը – ՀԳՀ-ի փորձագետը պետք է գնահատի (ա) առաջարկված բյուջեի և ծրագրի գործողությունների միջև կապակցվածությունը՝ բարձր գնահատելով այն հայտերը, որտեղ ներկայացված է հստակ կապ ծրագրի գործողությունների և բյուջեում ներառված ծախսերի միջև, (բ) ծրագրի շրջանակներում իրականացվելիք ապրանքների/ ծառայությունների/ վերապատրաստումների/այլ ծախսերի հիմնավորվածությունը: ՀԳՀ-ի փորձագետը պետք է համապատասխան քայլեր ձեռնարկի՝ համոզվելու համար, որ հայտը ներկայացրած հաստատության կողմից բյուջեում ներառված տողերի նախահաշվարկային արժեքը իրատեսական և վստահելի է: Սա նշանակում է, որ ՀԳՀ փորձագետը պետք է ուսումնասիրի հաստատության կողմից ներկայացված շուկայի ուսումնասիրության թղթերն՝ ըստ նախահաշվի տողերի, ըստ անհրաժեշտության իրականացնի շուկայի կրկնակի ուսումնասիրություն՝ ներկայացված հաշվարկի հիմնավորվածության աստիճանը հստակեցնելու համար՝ այս ցուցանիշով բարձր գնահատելով միայն այն հայտերը, որտեղ այդ հաշվարկը հստակ հիմնավորված և ներկայացված է: (գ) Համաֆինասավորման չափը՝ ՀԳՀ փորձագետը պետք է ելնի առնվազն 10 տոկոս համաֆինանսավորման իրականացման պահանջից՝ դա դիտելով իբրև նվազագույն շեմ: Նվազագույն շեմից ավել համաֆինանսավորումը, ինչպես նաև ոչ գումարային ներդրումների առկայությունը ծրագրային հայտում պետք է գնահատվի

համապատասխան կերպով՝ առավել բարձր միավորներ նշանակելով այս ենթաչափանիշով:
• Գործընկերոջ որակավորումը և ծրագրի նախագծին համապատասխանությունը (միայն կոնսորցիումային ծրագրերի համար) - Կոնսորցիում ծրագրերի համար ՀԳՀ փորձագետը պետք է գնահատի գործընկերներին՝ փոխլրացնող որակավորումների, աշխատանքային փորձի և ունակությունների տեսանկյունից, ինչպես նաև գործընկերների միջև պարտականությունների բաշխման արդյունավետությանը՝ ծրագրի բարեհաջող իրականացման և նախապես սահմանված նպատակների իրականացման նկատմամբ:
1. ՀԳՀ փորձագետը, տվյալ հայտի աշխատանքային խմբում ընդգրկված այլ փորձագետների հետ պետք է միավորներ տա հայտին՝ համաձայն ՆՄՀ ղեկավար ձեռնարկի Առդիր 1-ում (http://www.cfep.am/hy/announcements/item/2016/07/25/3746/) ներկայացված գնահատման համակարգի:
2. ՀԳՀ փորձագետը պետք է կազմի իր անհատական եզրակացությունը ամեն գնահատված հայտի համար, որն անհրաժեշտության դեպքում կարող է ներառել առաջարկներ՝ հայտի նախագծի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:
3. ՀԳՀ փորձագետը ըստ անհրաժեշտության պետք է ներկա լինի ՆՄՀ Համակարգող խորհրդի այն նիստերին, որոնք կապված են ՆՄՀ շրջանակներում ֆինանսավորման ենթակա ծրագրային հայտերի վերաբերյալ որոշումների կայացմանը և ՆՄՀ Համակարգող խորհրդին ներկայացնի լրացուցիչ մեկնաբանություններ՝ ըստ անհրաժեշտության:
4. Եթե ՀԳՀ փորձագետը անհամաձայնություն ունի աշխատանքային խմբի կարծիքի և կամ Համակարգող խորհրդի՝ տվյալ հայտի վերաբերյալ կայացված որոշման վերաբերյալ, ապա կարող է ներկայացնել հատուկ գրավոր կարծիք:
ՆՄՀ հավելյալ շրջափուլի համար պահանջվում են թեմատիկ փորձագետներ հետևյալ ուղղություններով.
1. Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ
2. Բնական գիտություններ
3. Հումանիտար և հասարակական գիտություններ
4. Արվեստ և սպորտ
ՀԳՀ թեմատիկ փորձագետի որակավորման նվազագույն պահանջներն են.
Խորհրդատուի որակավորումը – (առավելագույնը 30 միավոր)
• Բարձրագույն կրթություն հավելյալ շրջափուլի համար սահմանված վերոնշյալ ուղղություններից որևէ մեկով
• Անգլերեն լեզվի իմացություն

• ՀՀ բարձրագույն կրթության համակարգի լավ իմացություն
Ընդհանուր աշխատանքային փորձը - (առավելագույնը 30 միավոր)
• Առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ համապատասխան ոլորտում
• Միջազգային կազմակերպություններում աշխատանքային փորձը ցանկալի է
Աշխատանքային փորձի համապատասխանությունը ոլորտում - (առավելագույնը 40 միավոր)
• Ծրագրային հայտերի գնահատման փորձ
• Ծրագրի նախագծման և իրականացման փորձը ցանկալի է
ՀԳՀ ֆունկցիոնալ փորձագետի որակավորման նվազագույն պահանջներն են.
Խորհրդատուի որակավորումը - (առավելագույնը 30 միավոր)
• Բարձրագույն կրթություն տնտեսագիտության, բիզնեսի կառավարման, ֆինանսների կամ այլ համապատասխան ոլորտում
• Անգլերեն լեզվի իմացություն
• ՀՀ բարձրագույն կրթության համակարգի լավ իմացություն
• ՀԲ գնումների/ֆինանսական ընթացակարգերի իմացությունը ցանկալի է
Ընդհանուր աշխատանքային փորձը - (առավելագույնը 30 միավոր)
• Առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձ ֆինանսների, հաշվապահության կամ այլ համապատասխան ոլորտում, որից առնվազն երկու տարին՝ կրթության ոլորտում
• Միջազգային կազմակերպություններում աշխատանքային փորձը ցանկալի է
Աշխատանքային փորձի համապատասխանությունը ոլորտում - (առավելագույնը 40 միավոր)
• Ծրագրի նախագծման և իրականացման փորձը ցանկալի է
• Ծրագրային հայտերի գնահատման փորձ
ՀԳՀ փորձագետների աշխատանքը նախատեսվում է իրականացնել 2016 թ. նոյեմբեր ամսվա ընթացքում: Խորհրդատուների ընտրությունը կիրականացվի «Համաշխարհային բանկի վարկառուների կողմից խորհրդատուների ընտրության և վարձման ուղեցույցի» պայմանների համաձայն:
Հետաքրքրված թեկնածուները կարող են լրացուցիչ տեղեկատվություն ստանալ ստորև նշված հասցեով, երկուշաբթիից մինչև ուրբաթ (բացառությամբ տոն օրերի), հետևյալ աշխատանքային ժամերին՝ 11:00 մինչև 13:00 և 14:00 մինչև 17:00:
Հետաքրքրված անձիք պետք է ներկայացնեն դիմում և մանրամասն ինքնակենսագրություն (Curriculum Vitae):

Հետաքրքրվածության հայտը պետք է ներկայացվի ներքոնշյալ հասցեով կամ էլ-փոստով՝ մինչև 2016 թվականի հոկտեմբերի 21-ի ժամը 17:00-ն ներառյալ:
Դիմումի ձևը կցվում է:

«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ
Ս. Վրացյան 73, Երևան 0070, Հայաստան
Հեռ: (+37410) 57-56-90 (29, 50, 51)
E-mail: cfep@arminco.com
Կայքի հասցե: www.cfep.am

«Կրթական ծրագրերի կենտրոն»

ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, Վրացյան 73

Դիմող՝ _____

_____

_____

Դիմում

Սույնով ցանկություն եմ հայտնում մասնակցել

_____

_____

_____:

Կից ներկայացնում եմ տվյալներ իմ աշխատանքային փորձի և կրթության մասին:

Դիմող՝ _____ /_____/

«____» _____ 2016 թ.